ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի
ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 11 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 122

«29» հոկտեմբերի 2021թ. գ. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.
Էջմիածին համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Էջմիածին համայնքի 2021թ. հոկտեմբերի 29-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				5.	Կոնդյան Դավիթ			
2.	Գրիգորյան Վարդան				6.	Ղազարյան Գևորգ			
3.	Զաքարյան Սերգեյ				7.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				8.	Մովսիսյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Էջմիածին համայնքի ավագանու
2021 թվականի հոկտեմբերի 29-ի
թիվ 12 արտահերթ նիստի թիվ 122 որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴԻ ՄԱՐԶԻ ԱՐՋԱՄԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՉԵՐԿԱՍԻ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 132 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՄԻՀՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 12 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 123-Ն

«29» հոկտեմբերի 2021թ ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 - Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության 21.10.2021թ. թիվ //33808-2021 գրությունը

Համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «Էջմիածին համայնքի 2021թ. բյուջեի հաստատման մասին» թիվ 133-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				5.	Կոեղյան Դավիթ			
2.	Գրիգորյան Վարդան				6.	Ղազարյան Գևորգ			
3.	Զաքարյան Սերգեյ				7.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				8.	Մոլքանյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի էջմիածին համայնքի
ավագանու 29 հոկտեմբերի 2021թ.
թիվ 123 - Ն որոշմամբ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 2 ՀԱՏՎԱԾԸ

1. Բյուջեի եկամուտներ՝ հատված 1

Հազար դրամ

No	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021թ. ծրագիր
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1807861.1
1	*ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	420000,0
1.1	Հողի հարկ	70000,0
1.2	Գույքահարկ /շենքերից և փոխադրամիջոցներից/	350000,0
2	*ՏՈՒՐՔԵՐ*	68476,5
2.1	Պետական տուրքեր	28000,0
2.2	Տեղական տուրքեր	40476,5
3	*ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	373816.5
3.1	Գույքի և հողի վարձակալու- թյունից եկամուտներ	29500,0
3.2	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից վարչական պատասխանատ վության միջոցների կիրառումից եկամուտներ	3606,0
3.3	Տեղական վճարներ	325710.5
3.4	Այլ ոչ հարկային եկամուտներ	15000,0
5	*ՊԱՀՍՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ*	945568.1
5.1	Դոտացիա	783962,9
5.2	Այլ դոտացիա	
5.3	Այլ ընթացիկ դրամաշնորհ /զինծառայողներ/	1890.0
5.4	Փոխատվություններ /սուբվ./	2288.6
5.5	Պատվիրակ. լիազոր. իրական. համար ստացվող միջ.	7227.3
5.6	Միջազգային կազմակերպություն	
5.7	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	150199.3
6	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	

2. Բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2

Հազար դրամ

No	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021թ. ծրագիր

	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1955095.8
1	*ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*	246207.9
1,1	Տեղական ինքնակառավարում	238980.6
1,2	Ընդհանուր բնույթի համայն քային այլ ծառայություններ	7227.3
2	*ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ*	571867.8
2,1	Նախադպրոցական դաստիրակություն	396380.0
2,2	Արտադպրոցական կրթություն	175487.8
3	*ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑ ԱՊԱՀՈՎ.*	22500,0
4	*ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ*	220550.0
4,1	Գրադարաններ	34000,0
4,2	Մշակույթի տներ	27400,0
4,3	Թանգարաններ	20600,0
4,4	Սպորտ	115450.0
4,5	Այլ ծրագրեր	23100,0
5	*ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*	610905.9
6	*ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*	-221000,0
7	*ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՉԴԱՍԿՈՂ ԾԱԽՍԵՐ*	504064,2
7,1	Կապիտալ տրանֆերտ	150199.3
7,2	Միջազգային կազմակերպություն	
7,3	Այլ ծրագրեր /ֆոնդ. բյուջե/	353864.9
7,4	Վարչական մասի պահուստային ֆոնդ	

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 3 ՀԱՏՎԱԾԸ

3. Բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3

Հազար դրամ

No	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021 թ ծրագիր
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1955095.8
Ա	*Ընթացիկ ծախսեր*	1672031.6
	Աշխատավարձ	486536.0
	Էներգետիկ ծառայություններ	88590.1
	Կոմունալ ծառայություններ	300,0
	Կապի ծառայություններ	4250,0
	Ապահովագրական ծախսեր	5460.0
	Գույքի և սարք. վարձակ.	2000,0
	Ներքին գործուղումներ	500,0
	Արտասահմանյան գործուղում	1000,0

	Համակարգչային ծառայություն	1000,0
	Տեղեկատվական ծառայություններ	1000,0
	Ներկայացուցչական ծախսեր	1500,0
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	44000,0
	Մասնագիտական ծառայություն	1700,0
	Շենք. և կառույց. ընթաց. նորոգ.	77740,0
	Մեք. և սարք. ընթ. նորոգում.	5500,0
	Գրասենյակային նյութեր և հագուստ	9014,0
	Տրանսպորտային նյութեր	88333.8
	Առողջապահական և լաբորատոր նյութեր	500,0
	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1084,0
	Հատուկ նպատակային այլ նյութեր	51595.9
	Սոց. օգնության նպաստներ բյուջեից	24510.0
	Սուբսիդիաներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	769317.8
	Ընթացիկ դրամաշնորհներ միջազ. կազմակերպություններին	600,0
	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	1000,0
	Այլ կապիտալ դրամաշնորհներ	
	Այլ հարկեր	3000,0
	Քաղաքացիական պաշտպանություն	2000,0
	Պահուստային ֆոնդ	
բ	*Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր*	504064.2
	Նախագծահետազոտական ծախսեր	17937.0
	Շենք. շինությ. կապ. նորոգ.	434127.2
	Տրանսպորտային սարքեր	10500.0
	Վարչական սարքավորումներ	41500.0
	Այլ մեքեն. և սարքավորումներ	
	Պահուստային ֆոնդ	
գ	*Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր*	-221000,0
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	-11000,0
	Հողի իրացումից մուտքեր	-210000,0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	
	Կապիտալ տրանֆերտ	
	Միջազգային կազմակերպ. մուտքեր	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էջմիածին համայնքի ավագանու «Էջմիածին համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի որոշումը կատարելու և բյուջեի վարչական մասի եկամուտների նվազեցումը և բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացումը Էջմիածին համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 18.12.2020թ. թիվ 133-Ն որոշմամբ հաստատված բյուջեի ֆոնդային մասի եկամուտները.

1.1. Ավելացնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտների <Հողի իրացումից մուտքեր> 6410 տողը 120000.0 հազ. դրամ:

1.2. Բյուջեի ֆոնդային մասի ծախսը ավելացնել 120000.0 հազ. դրամ և ուղղել ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/:

1.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.03.2021թ. N 371-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 16.09.2021թ. N 1523-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 16.09.2021թ. N 1531-Ն որոշումները, ինչպես նաև 23.09.2021թ. համաձայնագիրը.

2.1. Նվազեցնել բյուջեի վարչական մասի եկամուտների <Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ> 1342 տողը 246.02 հազ. դրամ:

2.2. Բյուջեի վարչական մասի ծախսը նվազեցնել 246.02 հազ. դրամ: Նվազեցումը կատարել ընդհանուր բնույթի այլ ծառայությունների /բաժին 01, խումբ 3, դաս 3/ <Գրասենյակային նյութեր և հագուստ> հոդվածը /հոդ. 4261/ 200.0 հազ. դրամ և <Կենցաղային և հանրային սննդի նյութեր> հոդվածը /հոդ. 4267/ 46.02 հազ. դրամ:

2.3. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
էլ. փոստ suren.golstyan@justice.am

№ //33808-2021
«21» հոկտեմբեր 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 4908 գրության՝ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 133-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության կողմից պետական փորձագիտական եզրակացություն չի տրամադրվում՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ ***փորձաքննության չեն ենթարկվում*** պարտադիր պահուստավորման նորմատիվի կամ հատուկ տնտեսական նորմատիվների սահմանմանը, Կենտրոնական բանկի կողմից բանկային տոկոսի հաշվարկային դրույքի և բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը սահմանելուն ուղղված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումների նախագծերը, **պետական և համայնքային բյուջեների վերաբաշխման,**

ինչպես նաև բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝

Invalid signature

X

Margaryan Zara

Signed by: MARGARYAN ZARA 7810700162

ԶԱՌԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կատարող՝ Աշոտ Հովհաննիսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-125

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 12 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 124

«29» հոկտեմբերի 2021թ գ.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱՄԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով, հաշվի առնելով Էջմիածին համայնքի և Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդի մարզի Արզամաս համայնքի միջև բարեկամական կապեր հաստատելու մասին համաձայնագիրը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Վավերացնել Էջմիածին համայնքի և Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդի մարզի Արզամաս համայնքի միջև բարեկամական կապեր հաստատելու մասին համաձայնագիրը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				5.	Կոնդյան Դավիթ			
2.	Գրիգորյան Վարդան				6.	Ղազարյան Գևորգ			
3.	Զաքարյան Սերգեյ				7.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				8.	Տոնոյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք Արզամաս քաղաքային շրջանի (Ռուսաստանի Դաշնություն) միջև բարեկամական կապեր հաստատելու մասին

Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) վարչակազմը և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք Արզամաս քաղաքային շրջանի (Ռուսաստանի Դաշնություն) վարչակազմը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 15 սեպտեմբերի 2001թ.՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) և Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի միջև համագործակցության սկզբունքների մասին համաձայնագրի դրույթերով,

հաշվի առնելով Կողմերի միջև առևտրային, տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության ընդլայնման նկատմամբ փոխադարձ հետաքրքրվածությունը,

համոզված լինելով, որ նման փոխգործակցությունը մեծ հնարավորություններ կստեղծի այս քաղաքային կազմավորումների զարգացման համար և կնպաստի տարածաշրջանային մակարդակում բազմավեկտոր հարաբերությունների ակտիվացմանը,

առաջնորդվելով իրավահավասարության և փոխադարձ հարգանքի սկզբունքներով, գիտակցելով լայն, բաց և արդար տնտեսական համագործակցությանն աջակցելու անհրաժեշտությունը,

հատուկ նշանակություն տալով հաստատված բարեկամական կապերի ամրապնդմանը,

ձգտելով խրախուսել Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք Արզամաս քաղաքային շրջանում գրանցված տնտեսվարող սուբյեկտների միջև համագործակցությունը,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը հաստատում են բարեկամական հարաբերություններ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք

Արզամաս քաղաքային շրջանի միջև՝ գործընկերության և փոխադարձ վստահության սկզբունքների հիման վրա:

Հոդված 2

Կողմերն իրենց իրավասության սահմաններում նպաստում են Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք Արզամաս քաղաքային շրջանի տարածքում գրանցված տնտեսվարող սուբյեկտների միջև անմիջական կապերի հաստատմանը՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան կնքված պայմանագրերի հիման վրա:

Հոդված 3

Կողմերն իրենց իրավասության սահմաններում նպաստում են տնտեսության տարբեր ոլորտներում քաղաքային մակարդակով փոխշահավետ կապերի կայուն զարգացման ապահովմանը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում արդյունաբերության, քաղաքաշինության, տրանսպորտային համակարգի, քաղաքային և կոմունալ տնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարության, փոքր ձեռնարկատիրության ոլորտներում համագործակցության զարգացմանը և համատեղ ծրագրերի իրականացմանը:

Հոդված 4

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն կողմերը աջակցություն են ցուցաբերում երկու քաղաքային կազմավորումների տնտեսություններում ներդրումների, այլ կապիտալի ներգրավման, Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք Արզամաս քաղաքային շրջանի տարածքում գրանցված ձեռնարկությունների վերակառուցմանն ու արդիականացմանն ուղղված համատեղ ներդրումային ծրագրերի իրականացման գործում:

Հոդված 5

Կողմերն աջակցում են Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք Արզամաս քաղաքային շրջանի կրթական կազմակերպությունների միջև փոխգործակցության հաստատմանը և զարգացմանը՝ հայերեն և ռուսերեն սովորող դպրոցականների մշտական

շփումների և փոխանակումների, ուսանողների և գիտամանկավարժական աշխատողների փոխանակումների, կրթության ոլորտում համատեղ ծրագրերի մշակման և իրականացման, գիտական-գործնական գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների անցկացման միջոցով:

Հոդված 6

Կողմերը նպաստում են մշակութային կապերի ամրապնդմանն ու զարգացմանը, Ազգային մշակույթի օրերի անցկացմանը, թատերական ներկայացումների, մշակույթի և արվեստի գործիչների պատվիրակությունների փոխանակմանը, թատերական և համերգային խմբերի շրջագայությունների կազմակերպմանը, համատեղ ստեղծագործական ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև մշակութային ավանդույթների մասսայականացմանը:

Հոդված 7

Կողմերը նպաստում են Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք Արզամաս քաղաքային շրջանի երեխաների և երիտասարդների միջև տարբեր մարզաձևերում սպորտային մրցումների կազմակերպմանը, խրախուսում են համագործակցությունը և նպաստում այս քաղաքային կազմավորումների սպորտային կազմակերպությունների միջև կապերի հաստատմանը:

Հոդված 8

Կողմերը խրախուսում են զբոսաշրջության ոլորտում շփումների և կապերի զարգացումը, այդ թվում՝ զբոսաշրջային կազմակերպությունների միջև, Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի և Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք Արզամաս քաղաքային շրջանի կյանքի այլ բնագավառներում:

Հոդված 9

Կողմերն իրենց իրավասության սահմաններում օժանդակում են սույն Համաձայնագրի իրականացմանը նպաստող տեղեկատվության փոխանակմանը, բացառությամբ այն տեղեկատվության, որը հանդիսանում է պետական, առևտրային կամ օրենքով պաշտպանված այլ գաղտնիք՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության կամ

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության:

Հոդված 10

Կողմերը նպաստում են հանրային կարևորության միջոցառումներին մասնակցելու համար քաղաքային կազմավորումների պատվիրակությունների փոխանակմանը, փոխադարձ ուղևորություններին և համագործակցության տարբեր ոլորտներում կողմերի ներկայացուցիչների հանդիպումներին:

Հոդված 11

Կողմերը, ազգային ավանդույթների նկատմամբ փոխադարձ հարգանքի հիման վրա, շնորհավորում են ազգային տոների և հանդիսավոր օրերի կապակցությամբ, կազմակերպում մյուս կողմի պատմությանը, մշակույթին, ավանդույթներին և սովորույթներին ծանոթանալուն ուղղված աշխատանքներ՝ քաղաքային համայնքի, մշակութային, կրթական և այլ հաստատությունների և կազմակերպությունների լայն շրջանակների ներգրավմամբ:

Հոդված 12

Համաձայնագրի պայմանները կողմերից ոչ մեկի համար չեն նախատեսում որևէ ֆինանսական պարտավորություն, մինչդեռ Կողմերը պայմանավորվում են իրենց հնարավորությունների շրջանակում աջակցություն ցուցաբերել համատեղ նախագծերի իրականացման համար:

Հոդված 13

Համագործակցության համակարգման, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ կարծիքների փոխանակման նպատակով Կողմերը կազմակերպում են աշխատանքային հանդիպումներ, անցկացնում խորհրդակցություններ և բանակցություններ:

Անհրաժեշտության դեպքում, Կողմերը կարող են ստեղծել աշխատանքային խմբեր սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության ոլորտներում առանձին հարցերի լուծման համար:

Հոդված 14

Անհրաժեշտության դեպքում և փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրով նախատեսված երկկողմ փոխգործակցության յուրաքանչյուր ուղղությամբ Կողմերը կնքում են նման համագործակցության ընթացակարգը և պայմանները սահմանող առանձին համաձայնագրեր:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցման օրվանից և գործում է 5 տարի ժամկետով:

Սույն Համաձայնագրի գործողության ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդող հինգ տարվա համար, եթե Կողմերից որևէ մեկը նախքան համապատասխան ժամկետի ավարտը վեց ամիս առաջ մյուս կողմին գրավոր կերպով չի տեղեկացնում սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդում ծրագրերի և նախագծերի իրականացման վրա, ինչպես նաև սույն Համաձայնագրի շրջանակներում կնքված պայմանագրերի կատարման վրա, եթե Կողմերը ձեռք չբերեն այլ պայմանավորվածություն:

Կնքված է Էջմիածին քաղաքում «07» հոկտեմբերի 2021 թվականին, երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Արմավիրի մարզի	**Նիժնի Նովգորոդի մարզի քաղաք**
Էջմիածին քաղաքի	**Արզամաս քաղաքային շրջանի**
(Հայաստանի Հանրապետություն)	**(Ռուսաստանի Դաշնություն)**
վարչակազմի կողմից	**վարչակազմի կողմից**
Էջմիածնի քաղաքապետ	**Արզամասի քաղաքապետ**
Դ. Մ. Գասպարյան	**Ա.Ա. Շչյոլոկով**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 12 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 125

«29» հոկտեմբերի 2021թ ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՉԵՐԿԱՍԻ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով, հաշվի առնելով Էջմիածին համայնքի և Ուկրաինայի Չերկասի քաղաքի միջև բարեկամական կապեր հաստատելու և համագործակցելու մասին պայմանագիրը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Վավերացնել Էջմիածին համայնքի և Ուկրաինայի Չերկասի քաղաքի միջև բարեկամական կապեր հաստատելու և համագործակցելու մասին պայմանագիրը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				5.	Կոնդյան Դավիթ			
2.	Գրիգորյան Վարդան				6.	Ղազարյան Գևորգ			
3.	Զաքարյան Սերգեյ				7.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				8.	Մովսիսյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ՉԵՐԿԱՍԻ ՔԱՂԱՔԻ (ՈՒԿՐԱԻՆԱ) ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքը (Հայաստանի Հանրապետություն) և Չերկասի քաղաքը (Ուկրաինա), այսուհետ՝ Կողմեր, առաջնորդվելով փոխադարձ հարգանքի սկզբունքներով, երկու քաղաքների միջև առկա բարեկամական հարաբերություններն ամրապնդելու ցանկությամբ, երկարաժամկետ տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային հարաբերությունների զարգացման և ամրապնդման, երկու քաղաքների բնակիչների միջև փոխըմբռնման հաստատման նպատակով պայմանավորվեցին հետևյալի մասին.

Կողմերը համատեղ նպատակ ունեն նպաստել երկու քաղաքների տարածքային համայնքների միջև փոխըմբռնմանը, բարեկամության ամրապնդմանը և համագործակցության ընդլայնմանը, և հետևյալ ոլորտներում փոխշահավետ համագործակցության և փորձի փոխանակման զարգացման նպատակով աջակցության ցուցաբերերմանը.

- տնտեսական զարգացման, գործարար համագործակցության ընդլայնման, մասնավորապես՝ վերամշակող արդյունաբերության, թեթև արդյունաբերության, գյուղատնտեսական և ագրոքիմիական արդյունաբերության, զբոսաշրջության, արտահանման-ներմուծման համագործակցության զարգացման ոլորտում,
- քաղաքապետարանների գործունեության, մասնավորապես՝ քաղաքային տարածքների բարելավման, քաղաքային լուսավորության, քաղաքային տրանսպորտի, հատուկ տրանսպորտային միջոցների, էներգաարդյունավետության և այլընտրանքային էներգիայի աղբյուրների զարգացման վերաբերյալ, այդ թվում՝ բնակելի հատվածում,
- առողջապահության և բժշկական ծառայությունների ոլորտում,
-կրթական և մշակութային ծրագրերի և փոխանակումների իրականացում,
-համատեղ միջազգային ծրագրերի իրականացում, մասնավորապես՝ դրամաշնորհային ֆինանսավորման ներգրավմամբ,
- տեղեկատվության և փորձի փոխանակում այլ ոլորտներում, որոնք նպաստում են իշխանությունների և բարեկամ քաղաքների համայնքների միջև միջազգային հարաբերությունների զարգացմանը:

Էջմիածին քաղաքը և Չերկասի քաղաքը հույս են հայտնում, որ սույն Պայմանագիրը հիմք կհանդիսանա նրանց միջև արդյունավետ և տևական համագործակցության համար:

Սույն Պայմանագիրը ստորագրված է 08 հոկտեմբերի 2021 թվականին, երկու օրինակից, հայերենով և ուկրաիներենով, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Պայամանագիրն անժամկետ է և ուժի մեջ է մտնում պաշտոնական ստորագրումից և համապատասխան մարմինների կողմից հաստատումից հետո:

Հայաստանի Հանրապետության
Էջմիածին քաղաքի կողմից
Էջմիածնի քաղաքապետ
ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ուկրաինայի
Չերկասի քաղաքի կողմից
Չերկասիի քաղաքապետ
ԱՆԱՏՈԼԻ ԲՈՆԴԱՐԵՆԿՈ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 12 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 126

«29» հոկտեմբերի 2021թ. գ. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 132 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածնի համայնքապետարանի թիվ 1 մարզադպրոց ՀՈԱԿ-ի տնօրենի զեկուցագրերը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Էջմիածին քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2021թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 132 որոշմամբ հաստատված թիվ 5 հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխություններ և լրացումներ՝

1) 17-րդ տողում գրված «Լրավճար /10 հոգի կոչման համար/» բառերի փոխարեն կարդալ «Լրավճար /12 հոգի կոչման համար/» բառերը, նույն տողում աշխատավարձի ֆոնդ «100000» թվերի փոխարեն կարդալ «120000» թվերը:

2) ընդամենը տողում գրված՝ «6,094,720» թվերի փոխարեն կարդալ «6,114,720» թվերը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				5.	Կոնդյան Դավիթ			
2.	Գրիգորյան Վարդան				6.	Ղազարյան Գևորգ			
3.	Զաքարյան Սերգեյ				7.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				8.	Մովսիսյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 5
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 18-ի դեկտեմբերի 2020թ.
թիվ 12 նիստի թիվ 132 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 26-ի հունվարի 2021թ.
թիվ 2 նիստի թիվ 12 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 27-ը ապրիլի 2021թ.
արտահերթ թիվ 5 նիստի թիվ 46 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 18-ը հոկտեմբերի 2021թ.
արտահետթ թիվ 11 նիստի թիվ 113 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 29-ը հոկտեմբերի 2021թ.
արտահետթ թիվ 12 նիստի թիվ 126 որոշմամբ

2021թ. համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածնի համայնքապետարանի <<Թիվ 1 մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը 65
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքը	Միավոր	Դրույքաչափ	Աշխատավարձի ֆոնդ
1	Տնօրեն	1	185000	185000
2	Տնօրենի տեղակալ ուս. գծով	1	145000	145000
3	Գլխավոր հաշվապահ	1	140000	140000
4	մատենավար	2	88312	176624
5	գործավար	1	88312	88312
6	Տնտեսվար	2	88312	176624
7	Մասնաճյուղի պատասխանատու	2	88312	176624
8	Մարզիչ	28	88312	2472736
9	Բժիշկ	1	88312	88312
10	Բուժքույր	4	88312	353248
11	Հանդերձապահ	2	88312	176624
12	Փականագործ-Էլեկտրիկ	1	88312	88312
13	Օպերատոր /4 ամիս/	1	88312	88312
15	Պահակ	6	88312	529872
16	Հավաքարար	8	88312	706496
17	Լրավճար /12 հոգի կոչման համար/		10000	120000
18	Փրկարար	2	88312	176624
19	Ադմինիստրատոր	2	113000	226000
	Ընդամենը	65		6 114 720

1974 թվականի հունվարի մեկից հետո ծնված և նվազագույն աշխատավարձ ստացող աշխատակիցների պարտադիր սոցիալական վճարի գումարը փոխհատուցելու նպատակով փոխհատուցման գումարի չափով նախատեսվում է հավելավճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԹԻՎ 1 ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ
1101 ք Էջմիածին
հեռ. +374 (0.231) 5-24-16.
+374 (0.231) 5-36-63 -230

04723887

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
СПОРТ ШКОЛА НОМЕР 1
МЭРИИ
ГОРОДА ЭЧМИАДЗИНА
1101 г. Эчмиадзин
тел.+374 (0.231) 5- 24-16
+374 (0.231) 5-36-63 - 230

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR'S MARZ, CITY OF EJMIATSIN, N1 SPORT SCHOOL
1101, Ejmiatsin Tel: +374 (0231) 5-24-16 +374 (0.231) 5-36-63 / 230

N 0-1/ 140

25 հոկտեմբերի 2021թ.

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Ձեկուցագիր

Հարգելի՝ տիկին Գասպարյան.

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ Էջմիածնի համայնքապետարանի թիվ 1 մարզադպրոց ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում նախատեսված է եղել 10 մարզիչների կոչման համար լրավճար, սակայն 2021 թ.-ին մարզադպրոց աշխատանքի են ընդունվել 2 մարզիչ, որոնք ունեն սպորտային կոչում:

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը նրանց ևս ներառել հաստիքացուցակի լրավճար, կոչման համար նախատեսված սյունակում:

ՏՆՕՐԵՆ Ժ. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՎԵՐԱԳԻՐ № 2125

Հարություն Հայրապետյան

շնորհվել է Հայաստանի Հանրապետության
ատոմային վարպետի կոչում:

Նախարար

Հայաստանի Հանրապետության
ատոմային վարպետի կոչումը
շնորհվել է

Հարություն Հայրապետյան

Հայաստանի Հանրապետության
և նրա տարածքային ստորաբաժանումների
ատոմային էներգետիկայի 2003թ. մայիսի
№ 112-Ա/Ա հրամանով

Տրված է 2003թ. մայիսի 21-ին